ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Սպեկտրալուսաչափ իր ջերմակարգավորվող խցիկով	Սպեկտրալուսաչափ իր ջերմակարգավորվող խցիկով	Սպեկտրալուսաչափ իր ջերմակարգավորվող խցիկով	Սպեկտրալուսաչափ իր ջերմակարգավորվող խցիկով	Այն ներառում է ռեակցիաների գրանցման բարձր ճշտության վերջին արտադրության սպեկտրալուսաչափ, նմուշի ջերմակարգավորվող խցիկ: Սպեկտրալուսաչափ՝ իր համակարգչով և ծրագրային ապահովմամբ: Այն չափումներն իրականացնում է ի հաշիվ ներկառուցված հզոր քսենոնային լամպի, որը թարթում է վայրկյանում 80 անգամ: Այն նախատեսված է տարբեր քանակի նմուշների ճշգրիտ և վերարտադրելի չափումներ իրականացնելու համար: Սարքը

						հարմարեցված է գիտահետազոտական և ուսումնական բազմաբնույթ վերլուծությունների համար՝ ապահովելով ամուր և հուսալի աշխատանքների անընդհատ հոսք, կանխելով աշխատանքների ընթացքում անսարքությունները և նվազեցնելով տվյալների վնասման ռիսկը: Համակարգն ունի հնարավորություն ընդլայնելու անալիզների սահմանները ի հաշիվ դրան կցվող պարագաներով, օրինակ՝ նմուշառման սարքեր, արագ խառնման և հոսքի կարգավորման պարագաներ, նմուշի ջերմակարգավորում, տարբեր անկյան լուսարձակման տվյալների գրանցում և այլն: Քսենոնային իմպուլսային լամպի աղբյուրը տրամադրում է ամենաբարձր որակի տվյալներ ինչպես ՈՒՄ, այնպես էլ տեսանելի ամբողջ տիրույթում տվյալների գրանցման հնարավորություն: Լամպի նախագծված աշխատանքն ապահովում է երկար տարիների անխափան աշխատանք և կյանքի տևողություն: Սարքն ունի

						հնարավորություն չափումներ իրականացնելու սենյակային լույսի առկայության պայմաններում: Տրամադրում է սպեկտրալ հնարավորություն պինդ և հեղուկ մարմինների համար և համապատասխանում է միջազգային դեղագիտական նորմերի կանոնակարգերին: Սպեկտրալ տիրույթի ամբողջական սկանավորումը մինչև 3 վայրկյան: Ընդհանուր չափման տիրույթ՝ 190–1100 նմ, Առավելագույն չափման արագություն՝ 80 տվյալների միավոր վայրկյանում: Ֆոկուսացված ճառագայթի չափում՝ 1.5 x 1.0 մմ, Մոնոքրոմատոր՝ Czerny-Turner տեսակի, Ցանց՝ Հոլոգրաֆիկ, մոտ 27.5 x 35 մմ, 1200 գիծ/մմ, բեկման անկյուն միջինը 8.6° 240 նմ-ում: Պետք է ունենա 2 սիլիցիումային դիոդային դետեկտորներ՝ նմուշի և ստուգիչ ճառագայթների միաժամանակյա չափումների համար: Ուլտրամանուշակագույն-տեսանելի սահմանափակող լուծաչափ ≤ 1.5 նմ Տոլուոլ/հեքսան սահմանափակող լուծաչափ (EP/BP և TGA թեստ) ≥

						1.92 նմ Լուսափնջերի կորուստ՝ 198 նմ-ում՝ (12 գ/լ KCl, TGA և BP/EP մեթոդ) ≤ 0.187 %T, 220 նմ-ում՝ (10 գ/լ NaI ASTM մեթոդ) ≤ 0.018 %T, 370 նմ-ում՝ (50 մգ/լ NaNO2) ≤ 0.008 %T, Ալիքի երկարության ճշտություն՝ 541.94 նմ-ում ± 0.06, Ալիքի երկարության վերարտադրելիություն՝ ± 0.01 նմ, Լուսաչափական ճշտություն՝ NIST 930E ֆիլտրեր 1 ± 0.0007 կլանում Լուսաչափական միջակայք՝ ± 4.0 կլանում, Լուսաչափական միավորի չափման տիրույթ՝ ± 9.9999 կլանում, ± 200.00 %T, Լուսաչափական վերարտադրելիություն (կլանում)՝ NIST 930E ֆիլտրեր, 465 նմ-ում, 2 վ գրանցման ժամանակ, Առավելագույն շեղում՝ 1 միավոր կլանման մեջ <0,004 միավոր կլանում, Ստանդարտ շեղում 10 չափումների համար՝NIST 930E ֆիլտրեր, 546.1 նմ-ում 2 վ գրանցման ժամանակ, Առավելագույնը շեղում 0.5 միավոր կլանման մեջ <0,003 միավոր կլանում, Ստանդարտ շեղում 10 չափումների համար՝ < 0.0030 միավոր կլանում, Լուսաչափական

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					կայունություն 500 նմ, 10 վ գրանցման ժամանակ, 30 րոպե տաքացումից հետո <0.0004 միավոր/ժ Լուսաչափական աղմուկ 500 նմ, 1 վ գրանցման ժամանակ 0 միավոր կլանման մեջ՝ <0.0001 կլանման միավոր, 1՝ <0,0005, 2՝ 0,005, իսկ 260նմ, 1 վ գրանցման ժամանակում 0 միավոր կլանում՝ < 0,00015 միավոր կլանման շեղում: Շրջական գծի աղմուկ՝ 200-ից 850 նմ, գրաֆական գծի շտկում ±0.001 միավոր, Ունի հնարավորություն իրականացնելու հետևյալ չափումները՝ ալիքի երկարության սկանավորում, կինետիկա ժամանակից կախված, կոնցենտրացիայի չափում, կլանում ֆիքսված ալիքի երկարության ներքո, սպեկտրալ համեմատություն: Չափման խցիկի տարածքը (լ x խ x բ) 130 x 523 x 123 մմ ± 1%, խցիկի մուտք՝ վերևից և դիմացից: Սարքի չափսերը (լ x խ x բ)՝ 477 x 567 x 196 մմ ± 1%, փաթեթավորված՝ 595 x 710 x 350 մմ ± 1%, Ունի մինչև 10 կգ քաշ դիմակայելու հնարավորություն: Սարքի քաշը՝ 18 ± 1%, կգ, փաթեթավորված

						վիճակում՝ 23 ± 1% կգ, Սարքի տեղադրման/տեղափոխման պահանջներն են՝ Բարձրություն՝ 0–4600 մ, Ջերմաստիճան՝ -40–75 °C Խոնավություն՝ 15-90% հարաբերական, Սարքը նախատեսված է շահագործել հետևյալ աշխատանքային պայմաններում՝ Բարձրություն՝ 0–3100 մ, Ջերմաստիճան՝ 5–40 °C, Խոնավություն՝ 50–80% հարաբերական: Սարքի վերլուծական աշխատանքի համար շրջակա միջավայրի ջերմաստիճանը պահանջվում է լինի 20–25 ±2 °C սահմաններում: Սարքի էլեկտրական սնուցումը՝ 3.2 Ա/12 Վ հոսանքի աղբյուրից: Կողմնակի հոսանքի աղբյուրներից օգտվելը արգելվում է: Էլեկտրական լարերը եվրոպական BNC տեսակի, սնուցման լարում՝ 100–240 Վ փոփոխական հոսանք, հաճախականություն՝ 47-63 Հց, Հզորությունը չափման ժամանակ՝ 18 ± 1% Վտ, հանգիստ վիճակում՝ 9 ± 1% Վտ Սպեկտրալ թողունակություն՝ 1.5 նմ-ի վրա միջին ազդանշանի հաշվարկ՝ 0.0125–999 վ, Սկանավորման

						առավելագույն արագություն՝ 24,000 նմ/րոպե, Պտտման արագություն՝ առավելագույն 24,000 նմ/րոպե, Տվյալների միջակայք՝ 0.15–5.0 նմ Կրկնվող սկանավորում՝ րոպեում մոտ 4800 տվյալների միավոր, ցիկլերի առավելագույն քանակը՝ 999, ցիկլի առավելագույն տևողությունը (րոպե)՝ 9999, Նմուշի նվազագույն ծավալի հնարավորություն՝ 0.5 մկլ։ Սարքի կառավարումը պետք է լինի WINDOWS ծրագրային ապահովումով համակարգչից, USB տիպի միացումով։ Փաթեթի մեջ ներառված է ամբողջական ծրագրային ապահովումը։ Սարքավորումը ներառում է նմուշների Պելտիեր էֆֆեկտով ջերմակարգավորման խցիկը։ Այն կառավարվում է ծրագրային ապահովմամբ կամ անմիջապես նրա էկրանից։ Այն պետք է ներառի ջրային պոմպ, որն ապահովելու է ջրի շրջանառություն, նմուշի (կյուվետում) հատվածում՝ ապահովվելու սահմանված ջերմաստիճանը։ Կյուվետի տեղամասում կան հատուկ

						սենսորներ և տաքացման հատված, որոնք ունեն հետևյալ բնութագրիչները՝ Ջերմաստիճանի կարգավորման ճշգրտություն՝± 0.05 °C Ջերմաստիճանի միջակայք՝ 0-100 °C Ջերմաստիճանի կայունություն՝ ± 0.1 °C Ջերմաստիճանի ճշգրտություն՝ ± 0.2 °C Ցուցադրման միջակայք՝ 0-100 °C Պետք է ներառի առանձին կյուվետի տեղամասը, որը տեղադրվում է խցիկի աշխատանքային վիճակի բերելու համար մեկ կյուվետի համար, կյուվետի տեղամասի հիմնական բնութագրերն են՝ - 10 ± 0,1% մմ կյուվետի համար նախատեսված խցիկ - Peltier էֆֆեկտով ջերմակարգավորող միավոր, - Հարթ միացման լար սենսորների համար, - Խցիկի միացման լար, սերիական լար, - Փոքր ջրային պոմպ, 0.5 Լ/րոպե առավելագույն հոսքով, - Ներքին էլեկտրամագնիսական խառնման մեխանիզմ Սարքավորման և կցվող պարագաների հետ պետք է մատակարարվի դյուրակիր համակարգիչ, որն ունի համապատասխան միացման

						հատվածները համաձայն սարքի և պարագաների լարերին: Համակարգիչը պետք է ունենա առնվազն 8ԳԲ RAM, 16ԳԲ ընդհանուր հիշողություն, ունենա մկնիկ, Էկրանի տրամագիծը՝ առնվազն 15.6 դյույմ: Բոլոր էլեկտրական սարքավորումները պետք է աշխատեն 220Վ/50Հց հոսանքով և ունենակ եվրոպական տեսակի վարդակներ: 1 փաթեթը համապատասխանում է 1 հատի: Արտադրողը տրամադրում է սերտիֆիկացված մասնագետներ սարքի տեղադրման, սպասարկման և ուսուցման համար: Առկա է արտադրողի լիազորագիրը սարքի մատակարարման համար: Այն պետք է լինի առնվազն 2025 թ արտադրության: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և չպետք է պարունակի օգտագործած, վնասված կամ կիսամաշ դետալներ: Մատակարարումից առաջ պետք է համաձայնեցնել պատվիրատուի հետ: Տեղադրումը և ուսուցումը արտադրողի պաշտոնական ներկայացուցչի սերտիֆիկացված ճարտարագետի կողմից ոչ պակաս

						քան տաս օր: Ծառայությունները ներառում են՝ • Տեղադրումից և աշխատանքային վիճակից սկսած 12-ամսյա երաշխիքային աջակցություն սարքի համար, 10 տարի քսենոնային լամպի համար, 7 տարի լրամասերի արտադրություն, վերջին արտադրված սարքից: • Կանխարգելիչ սպասարկում՝ կայուն աշխատանք ապահովելու և անսարքությունները նվազագույնի հասցնելու համար • Խնդիրների լուծում, սպասարկում և վերանորոգում • Ծրագրային ապահովման աջակցության ծառայություններ • Համապատասխանության ծառայություններ, ներառյալ սարքավորումների և ծրագրային ապահովման IQ և OQ • Երաշխիքի համապարփակ երկարաձգում և սպասարկման պայմանագրեր, ներառյալ ծայրամասային սարքավորումները • Մասնագետների կողմից անցկացվող դասընթացներ և տեղում ուսուցում: հատ Ալեք Մանուկյան 1/3 Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 3 ամսվա

					ընթացքում